

Ukutu

3737

Funon Quapptle

12. 1913

6107 1913 № 2845 505  
0407



# ՔԱՒՈՐ ԳԱՔՐԻԷԼԸ

(Հեփաք)

2004

Գ. ՄԵՍԵՆՆ

ԳԻՆՆ Է 2409.

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОЧЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР



Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան «ՀԵՐԱԷՍ», Գրաճեփայա փող.  
1913

G107

891 9015

V-64



# ՔԱՒՈՐ ԳԱԲՐԻԷԼԸ

(Հեփաք)

ԳԻՆՆ Է 2 400.

Գ. Մ Ե Ս Ե Ն Ն  
 БИБЛИОТЕКА  
 ИНСТИТУТА  
 ВОСТОКОВЕДЕНИЯ  
 Академии Наук  
 СССР



Թ ի Փ Ղ ի Ս

Տպարան «ՀԱՐՄԷՍ», Գրաճեղալս փող.  
1913

## ՔԱՒՈՐ ԳԱՔՐԻԷԼԸ

Վաղ ժամանակ ապրում էր մեր երկրում մի անբախտ մարդ: Անբախտ եմ ասում ես նրա համար, որ էս խեղճի մէկը երկու չէր դառնում: Գործը միշտ անյաջող էր. քանի որդի էլ որ ունեցաւ՝ բոլորը եկան, դարձան էսպէս երեք, չորս տարեկան ու մեռան: Շատ միջոցների դիմեց նա. էլ գէր ու թալիսման չթողեց, խաչ ու սուրբ, բժիշկ ու հէքիմ—բոլորին էլ դիմեց, բայց էլի հնար չեղաւ, որդիքը չէին մնում:

Մէկ օր էլ սրա կինը մի նոր որդի ունեցաւ:

50399-ահ



Գ-36150-66


—Այ մարդ, տասց կինը, վեր կաց, հեռացիր մեր երկրից, գուցէ սրա վրայ անէծք կայ. վեր, գնա հեռու աշխարհ, շրջիր, ծանօթացիր, մի բարի ու արդար մարդ գտիր, բեր մեր երեխան մկրտի, գուցէ Աստուծո ղորմութիւնը հասնի ու նրա ձեռքով էլ մեր որդին ազատի չարից:

—Լաւ ես ասում, ա կնիկ, ասաց մարդը. դէ բեր, մի հաց տուր, ճամբայ ընկնեմ:

էս մարդը մի հաց դրաւ փեշքումը, Աստուծու անունը տւաւ ու ճամբայ ընկաւ, գնաց:

—Մինչև չիմանաս որ արժանաւոր մարդ է, չբերես հա՛, այ մարդ, յետեից ձայն տւաւ կինը:

Մարդը ճանապարհ ընկաւ ու գնում է: Գնում է, գնում, մէկ էլ տեսնում է, հրէս իր դիմացից մի ալևոր մարդ է գալիս, մի ալևոր, որ մագերը



ձիւնից էլ սպիտակ, հասակը բարձր,  
միրուքը մինչև զօտկատեղը հասած,  
նայւածքը քաղցր, ձեռքի գաւազանն էլ  
հանդարտ ու կանոնաւոր գետնին յե-  
նելով գալիս է:

Նկան, իրար հասան:

— Բարի աջողում, որդի:

— Աստծու բարին, ալևոր:

— Էդ սոռաջ բարի էդպէս:

Սա մին-մին սկսեց պատմել բոլորը,  
թէ, բա էսպէս, էսպէս բան, հիմա  
գնում եմ քաւոր ճարեմ:

Էս ծերունին՝ թէ, այ մարդ, երբ  
որ էդպէս է, էլ ճամբադ մի երկարաց-  
նի, եկ, էստեղից ետ դառ, գնանք, ես  
քեզ քաւոր կդառնամ:

Գիւղացին թէ՛ ինչ կլինի որ, շատ  
լաւ ես ասում, միայն թէ ես մինչև  
չիմանամ, թէ իմ քաւորը ինչ մարդ  
է, ինչ գործի տէր, ես նրան քաւոր  
չեմ տանիլ:

Ծերունին ժպտաց:

— Իէ որ էդպէս է, իմացիր, որ ես  
Աստուած եմ:

— Աստուած:

— Հա:

— Չէ, Տէր, ասաց գիւղացին գլու-  
խը բացասաբար շարժելով, հեշտ բան  
չի Աստծու հետ բարեկամանալը. թո-  
ղութիւն արա, որ քեզ քաւոր տանել  
չեմ կարող:

Ալևորը յետևից ժպտաց, իսկ գիւ-  
ղացին թողեց նրան ու անցաւ:


Քիչ էլ որ գնաց, մէկ էլ մի ջահէլ  
ճամբորդի պատահեց:

— Բարի աջողում:

— Աստծու բարին:

— Էդ ո՞ւր էդպէս, այ բիձա, հարց-  
րեց նոր պատահող երիտասարդը:

— Ես գնում եմ, ախպէր, երեխուս  
համար մի քաւոր ճարեմ, ու սկսեց  
սրան էլ մին-մին պատմել դրա պատ-  
ճառները:



— Երբ որ էգպէս է, բիձա, եկ էլ ճամբադ մի երկարացնի, ետ դառ էստեղից, ես քեզ քաւոր կդառնամ՝ գնանք։

— Ինչ կլինի որ, լաւ ես առում, միայն թէ ես ասած ունեմ, որ մինչև չիմանամ թէ ո՞վ է, ինչ մարդ է՝ ես նրան քաւոր չեմ տանիլ, նրա գիրկը երեխայ չեմ տալ։

Ուզում ես իմանալ՝ իմացիր. ես Գաբրիէլ հրեշտակապետն եմ, Ասածոյ առաջին ծառայող, լսած կլինես իմ անունն Ծօ։

— Հան, այ, ինչ կասեմ, քեզ քաւոր կտանեմ, դու արդար մարդ ես, կողմապահուլթիւն կամ երկերեսուլթիւն չգիտես, բոլորի հոգին էլ առնում ես՝ ոչ հարուստ ես հարցնում, ոչ աղբատ։

Ու յետ են դառնում էստեղից Գաբրիէլ հրեշտակապետն ու գիւղացին, ու գալիս իրանց տուն։ Տանը ինչպէս որ կարգն է մի լաւ կնուկը են անում,

երելսին մկրտում ու Գաբրիէլն էլ դառնում է նրանց քաւորը:

Որ կնուէնքը վերջանում է, հացն էլ ուտում են պրծնում՝ գիւղացին օգուտ է քաղում հանգամանքից.

—Քաւոր Գաբրիէլ, ասում է՝ էս է մենք բարեկամ մարդիկ ենք, իմ պակասութիւնս էլ քոնն է. մի հնարք արա, ըո՛ ձեռին դժար չի, գործերս մի քիչ յաջողեցրու, որ կարենամ տուն տեղ պահեմ, ապրուստ անեմ:

Գաբրիէլը թէ, լաւ. հէնց էգուցւանից ես կհիւանդացնեմ մի հարուստ մարդու. դու կգնաս կասես բժիշկ ես. հողից կամ մոխրից մի քիչ ջուր կանես, կիմացնես՝ ես կհեռանամ նրանից ու նա կառողջանայ: Միայն չմոռանամ ասել, որ հէնց որ ներս կմտնես հիւանդին տեսնելու՝ ես կերևամ քեզ. եթէ նստած լինեմ հիւանդի ոտների տակ, հօգիտեցիր որ քոնն է, ասա, որ կարող ես

լաւացնել. իսկ եթէ չէ, տեսար գլխատակին եմ, կնշանակի որ նրա ժամանակը հասել է պէտք է հոգին առնեմ՝ մօտ չգաս:

Միւս օրը լուր հասաւ, թէ թագաւորի աղջիկը հիւանդացել է: էլ աշխարհումը մի բան գիտցող չմնաց, որ կանչել չտան, բայց ոչ ոք չկարողացաւ մի ճար մի հնար անել:

Թագաւորը յայտարարում է, թէ քաշովը մին ոսկի կտամ՝ ով որ կարենայ իմ աղջկանը առողջացնի:

էս որ լսում է Գաբրիէլի սանահէր գիւղացին, միտն է ընկնում քաւորի ասածներն, ու մտար կծում է: Վեր է կենում մի հաց փեղքումը դնում, մի քիչ մոխիր էլ թղթով գրպանը, ու ճամբայ ընկնում ուղիղ դէպի թագաւորի պալատը: Որ գալիս է թագաւորի պալատի դռանը նստում, նազիր վեզիրները կարծում են, թէ սա աղքատ

մարդ է, եկել է ողորմութիւն ինդրե-  
լու, բերում են որ բաժին տան. բայց  
գիւղացին չի ընդունում.

— Ես աղքատ չեմ, հօ, ասում է. ես  
բժիշկ եմ, գնացէք թագաւորին յայտ-  
նեցէք, որ ես եկել եմ նրա աղջկանը  
բժշկեմ: Պալատկանները ծիծաղում են  
սրա վրայ:

— Այ մարդ, ասում են, տեսնում  
ենք որ խեղճ մարդ ես, գնայ քո գոր-  
ծիդ, քո ապրուստիդ կաց, ինչո՞ւ ես  
եկել գլուխդ փորձանքի մէջ գցելու:  
Էնքան բժիշկները եկան, ինչ արին,  
թէ նոր գու ինչ անես. թագաւորին  
կբարկացնես՝ կպատժի:

Չէ ու չէ, գիւղացին պալատի դռ-  
նից չի հեռանում:

— Դա ձեր գործը չի, ասում է,  
դուք գնացէք թագաւորին իմաց տւէք  
իմ գալը:

Գալիս յայտնում են թագաւորին:

Թագաւորը մին ուրախանում, մին էլ  
բարկանում է.

— Այ գիւղացի, ասում է, քեզ պէս  
շատերն են եկել քեզանից առաջ՝ յոյս  
տւել թէ կլաւացնեն, բայց ոչինչ չեն  
կարողացել անել ու վեր են կացել  
գլխները կախ հեռացել: Հիմա քեզ էլ  
մի պայմանով կթողնեմ. թէ որդուս  
լաւացրիք, հօ լաւ՝ կտամ ինչ որ ու-  
զես, թէ ու չէ՝ իմացած եղիք որ վերջդ  
հասել է:

— Շատ լաւ, թագաւորն ապրած կե-  
նայ, միայն թէ խնդրում եմ ինձ ներս  
թողէք մի բոպէ, նայեմ հիւանդին ու  
կասեմ, կլաւացնեմ թէ չէ:

Գիւղացուն ներս են թողնում: Սա  
գալիս նայում է, տեսնում իրա քաւոր  
Գաբրիէլը նստած թագաւորի աղջկայ  
ոտների տակ: Չանն, մտածում է գիւ-  
ղացին ինքն իրան.

— Կարող եմ, թագաւորն ապրած

կենայ, կարող եմ լաւացնել, միայն հազար մանէթդ կառնեմ:

Թագաւորը չափից դուրս ուրախաւում է ու իսկոյն հրամայում՝ փող բերեն նրա համար ինչքան էլ ուզում է: Գիւղացին հազարից շատը չըզիտէր. նա առաջին անգամն էր էդքան փողը տեսնում ու համարում:

Հեռացնում է բոլորին հիւանդի սենեակից, հանում նախօրօք հետը վերցրած մոխրից մի քիչ, մի բաժակի մէջ ջրով խառնում ու տալիս հիւանդին:

Հիւանդը խմում է, Գաբրիէլը ժըպտալով վեր է կենում հեռանում ու Թագաւորի աղջիկը ըոպէսպէս առողջանում է, ինչպէս առաջ:

Ինչ ասել կուզի, որ գիւղացին բացի էն հազար մանէթից, ուրիշ մի քանի հազարի էլ ընծաներ է ստանում ու չորս կողմին մտիկ տալով, ուրախ-ու-

րախ վերադառնում տուն: Այնուհետև էլ օր չէր անցնում, որ մի նշանաւոր մարդ չհիւանդանար:

Ամենին էլ սա գնում բժշկում ու պատուով ու առատ վարձատրութեամբ վերադառնում էր տուն: Մի խօսքով կարճ ժամանակում աս իրան կարգին ուղղեց, հարստացաւ — տուն ու տեղի, ապրուստի տէր դառաւ:

— Հ՛ը, սանահէր, քէֆդ սնց է հիմա, գոհ ես վիճակիցդ:

— Շատ շնորհակալ եմ քաւոր Գաբրիէլ, շատ, ամեն ինչս լաւ է, քո լաւութիւնդ մոռանալու բան չի... միայն՝ մէկ ուզում եմ մի բան էլ հարցնեմ, մի բան էլ խնդրեմ, մէկ էլ վախենում եմ թէ ճիշտը չասես:

— Ասա, տեսնեմ ի՞նչ է խնդիրդ:

— Քաւոր Գաբրիէլ, դու էդ սնց ես ճանաչում բոլոր մարդկանց, սնց ես միտդ պահում թէ նրանցից որի ժամա-

նակը երբ է լրանում, որ գնաս հողին  
առնես. համ էլ էս սնց է որ մէկինը  
շուտ ես առնում, մէկինը ուշ. չի լի-  
նի մի ինձ ասես էս:

— Ինչո՞ւ չի լինի. դէ որ ուզում ես  
իմանաս, էգուց ինձ հետ եկ, տանեմ  
ցոյց տամ:

Միւս օրը սա քաւոր Գարրիէլի  
հետ վեր է կենում գնում: Էլ չզրիտէ  
ուր են գնում, ուր չեն գնում, միայն  
մէկ էլ էն է տեսնում, որ մի մեծ  
տան մէջ են: Էդ տան մէջ իրար կող-  
քի կարգով շարեւծ են բազմաթիւ  
վառւած իւղածրագներ պատրոյգներով:  
Իւղերի քանակութիւնը ճրագների մէջ  
զանազան է, լոյսերն էլ նոյնպէս: Մինը  
վառւում է շատ պայծառ, մինը՝ աղօտ,  
մինը՝ հազիւհազ, չորրորդը՝ հանգչելու  
վրայ է. ու էսպէս անվերջ, անհամար:

— Տեսնում ես, սանահայր, էս տունն  
ինձ է յանձնւած, ես եմ հսկում, սրանք

էլ, էս ճրագները մարդկանց կեանքերն  
են. սրանք են ցոյց տալիս, թէ որի  
հողին երբ պէտք է առնեմ: Այ, էս  
լաւ վառուողը մի հարուստի կեանք է,  
իդ էլ կայ բաւական, կապրի էլի մի  
20, 25 տարի: Սձ, մի աղքատի կեանք  
է, թէև իւղ կայ, բայց վառւում է  
դժւարութեամբ— ջքաւոր է:

— Էս իւղը քանի՞ ասրւայ կեանք  
է, մատը իւղի սահմանին դնելով հար-  
ցրեց սանահայրը մէկի մասին:

— Դա չորս տարի էլ կապրի:

— Սձ, հետաքրքիր հարցրեց մի ու-  
րիշի, աւելի քչի մասին:

— Դա՛ մի քանի ամսից ժամանակը  
կըլլանայ: Այ, սրանք էլ, որ հանգչելու  
վրայ են՝ հինգշաբթի օրը ժամանակն  
է, պէտք է գնամ առնեմ:

Սանահօր սիրտը էստեղ ահ ընկաւ:

— Քաւոր ջան, քաւոր, ի՞նչ կլինի  
մի իմն էլ ցոյց տան...

36150-68



—Ե՛կ, և մի քանի պայտներ գործելով ցոյց տուաւ մի անկիւնում վառուող սանահօր կեանքի ճրագը:

Գիւղացին նայեց ուշի ուշով իւղին՝ տեսաւ որ քիչ է մնացել. սիրտն անընկաւ. մի քիչ լռեց, յետոյ թուրք կուլ տուաւ մի կերպ ու ասաց.

—Քաւոր, ի՞նչ կլինի որ մի քիչ իւղ աւելացնես իմ ճրագին, բա մեր բարեկամութիւնը որ օրւայ համար է: Գարբիէլը ժպտաց.

—Է՞դ ի՞նչպէս կարելի է, սանահէր, սա բոլորը Տիրոջ կարգադրութեամբն է, ես ի՞նչպէս կարող եմ փոխել:

—Է՛ է՛ է՛, հէր օրհնած, հիմա որ դու էստեղ մի քիչ իւղ աւելացնես, Տէրը ինչ է իմանում, թէ դու աւելացրել ես: Շատ է ինչրում, շատ է աղաչում, բայց հնար չի լինում, միայն թէ յայտնում է Գաբրիէլը, որ հինգ տարի էլ կեանք ունես:

Վերադառնում է տուն էս մարդը փոխ փոշման, հացն ու ջուրը մտքիցն ընկնում են, բայց կեանքի հինգ տարին չի ընկնում: Մի քանի որդիներ է ունենում, բոլորն էլ ապրում են, ինքն էլ շարունակում է իր բժշկութիւնը ու փողէ՝ որ աշխատում է.

—Ես հօ պէտք է մեռնեմ, ասում է, գոնէ որդոցս ապրուստն ապահովեմ, որ ինձանից յետոյ լաւ ապրեն: Մէկ օր էլ լուր է հասնում, որ մի ուրիշ թագաւորի մինուճար որդին ծանր հիււանդ է, և ինչքան որ հնար են գործ դրել՝ բոլորն էլ իրողը է անցել. թագաւորը յայտարարել է, թէ ով իմ որդուն առողջացնի՝ կընեմ կշեռքի մէջ ու իր քաջովը օխտը ոսկի տամ:

Գաբրիէլի սանահէրը էս լսելուն պէս, վեր է կենում ճանապարհ ընկնում դէպի թագաւորի պալատը:

Թագաւորը որ իմանում է, թէ սա

էն գիւղացին է, որ մի ժամանակ լա-  
ւացրել է այն ինչ թագաւորի աղջկանը,  
ու էլի ուրիշ շատերին՝ իրա թագաւոր  
տեղովը վեր է կենում գահից ու խո-  
նարհւում, գլուխ տալիս. քիչ է մնում  
թէ էն հասարակ գիւղացու ոտքերը  
համբուրի.

— Թագաւորութեանս կէսն ես ու-  
զում, ասում է, կտամ միայն թէ որ-  
դուս լաւացրու:

Հեշտ բան չէր, մինուճար ժառանգը  
մեռնում էր, էլ ո՛վ պէտք է իր գահը  
յաջորդէր. իրանից յետոյ թագաւորա-  
կան օջաղը պէտք է հանգչէր:

Գիւղացին թէ. — մինչև հիւանդին  
չտեսնեմ՝ ոչինչ ասել չեմ կարող, կա-  
ռողջացնեմ, թէ չէ:

Սա ներս է մտնում հիւանդի սե-  
նեակը, տեսնում քաւոր Գաբրիէլը հի-  
ւանդի գլխավերևը: Բոլոր յոյսերն ու  
ուրախութիւնը բոպէսպէս չքանում

են: Սենեակից հեռացնում է միւս-  
ներին ու բռնաբ ըննում սկսում աղա-  
չել.


— Բաւոր ջան, ասում է, եկ էս  
մինն ինձ բախշի, գլխավերևը նստելու  
ժամանակ չի, չաղ պատառ է, յաւի-  
տենապէս կապահովեմ՝ էղտեղից  
վեր կաց, թող բժշկեմ:

Գաբրիէլը կտրական կերպով յայտ-  
նում է, որ հոգին պէտք է առնի՝ թող  
հեռանայ:

Ձի իմանում ինչ անի, այդպիսի  
մի առատ վարձատրութիւնից զրկւելու  
հետ հաշուել չի կարողանում:

— Կբժշկեմ, թագաւորն ապրած կե-  
նայ, յանկարծ յայտնում է գիւղացին,  
միայն ինձ տէք երկու ուժեղ տղաներ:

Իսկոյն ցանկացածը կատարում են:  
Կանգնեցնում է մէկին հիւանդի գլխի,  
միւսը ոտքերի կողմը և ասում. — Հէնց  
որ նշան կտամ, իսկոյն կբռնէք մահ-



ճակարի ծայրերից ու վայրկեանապէս շրջէք հակառակ կողմը—գլուխը ոտների, ոտները գլխի: Նշանը տալուն պէս՝ պտտուում են մարդիկը և հէնց որ Գաբրիէլի նստած տեղը հասնում է ոտների կողմը՝ շուր արած մոխիրը ածում է հիւանդի բերանը. հիւանդը ողջ, առողջ վեր է կենում տեղից կանգնում:

Ուրախութեան մասին էլ ինչ խօսք, թէ ինչ կլինէր: Գաբրիէլը գլուխը կորցնում է, մնում է շլւարած. աշխարհի ստեղծելու օրից դէսը էսպէսի փորձանքի մէջ չէր ընկել դեռ, հիմա ինչ պատահեց. գնայ ինչ ասի Տէրին:

Սանահէրն էլ իրան հասանելիքը ստանում է ու ճանապարհւում տուն:

Հինգ տարին կամաց կամաց քչանում էր. մի օր էլ լրացաւ, ու երևաց քաւոր Գաբրիէլը:

Սանահէրը թէև երես չունէր քա-

ուրից բան խնդրելու, բայց էլի սկսեց  
 աղաչել, պաղատել թէ մի քանի օր  
 ժամանակ տուր հազար ու մի գործեր  
 ունեմ կիսատ յանձնարարեմ ուրիշնե-  
 րին, պարտքերս տամ, ու նրանից յե-  
 տոյ, եկ առ: Գարբէլը թէ՛ շուտ արա,  
 պարտասուիր ժամանակդ հասել է. քո  
 պատճառով մի անգամ սևերես մնացի  
 բաւական չէր, որ հիմա էլ ժամանակ  
 տամ:

Գիւղացին խեղճացաւ. տեսաւ որ  
 էդ ձևի հնարքները չեն օգնում. ցոյց  
 տաւ, որ հաշտում է ձախատազրի  
 հետ, երեսը դարձրեց դէպի արևելք.

— Դէ, բաւոր Գարբիէլ, տեսնում  
 եմ որ վերջին օրս է. էհ, մահկանացու  
 մարդ ենք եղել, հազար ու մի մեղքեր  
 ունենք, թող գոնէ վերջին անգամ մի  
 աղօթեմ Աստծուն ու յետոյ առ հոգիս:

— Այ, դրան ինչ կասեմ, խնդիրդ

իրաւացի է, աղօթիր, ես քիչ աղօթե-  
 լու ժամանակ կտամ:

— Չէ, բաւոր ջան, մեղքերս շատ  
 են, վախենում եմ աղօթքս չվերջա-  
 ցրած հոգիս առնես, մեղաւոր մնամ.  
 եթէ ճիշտ որ չես ընդհանտի աղօթքս,  
 երգւիր Տէրի անունով, որ մինչև «Հայր-  
 մերը» չվերջացնեմ՝ հոգիս չառնես:

— Երգում եմ Տէրի անունով, որ  
 մինչև «Հայր մերը» չվերջացնես՝ հո-  
 գիդ չեմ առնել, ժպտալով ասաց Գար-  
 րիէլը:

Սանահոր դէմքը զւարթացաւ:

Ուրախ-ուրախ խաչակնքեց երեսին  
 ու բարձր ձայնով սկսեց. «Հայր մեր,  
 որ յերկինս ես, սուրբ եղեցի»... ու լռեց:

— Դէ, շուտ արա, Սանահէր, ժամա-  
 նակն անցնում է, աղօթքդ վերջացրու.  
 յիշեցրեց Գարբէլը:

— Գէֆս չի՛, էլ չեմ ասում, էս  
 մնացած կէսն էլ երբ որ քէֆս կուայ,


ՀԱՅԿԱՍՏԱՆԻ  
 ԳՐԱԴԱՐԱՆ  
 ԳՐԱԳՈՒԹՅԱՆ  
 ԳՐԱԴԱՐԱՆ  
 ԿՈՄԻՏԵ  
 ԻՆՍՏԻՏՄԷ  
 ԳՐԱԳՈՒԹՅԱՆ  
 ԱԿԱԴԵՄԻԱ  
 ԿՍՍՐ

էն ժամանակը կասեմ, դու հօ խոստացել ես՝ մինչև չվերջացնեմ «Հայրմերը» հոգիս չառնես:

— Վայ, քո տունդ քանդելի, շրտարում է Գաբրիէլը. էս էլ երկրորդ, էս ինչ փորձանք բերաւ գլուխս:

Վեր է կենում հեռանում: Տարիներ են անցնում անհաշիւ տարիներ, Գաբրիէլը բանն ու գործը թողած, հետևում է Սանահէր գիւղացուն, որ մի կերպով ասել տայ «Հայրմերը» ու Աստծու հասանելիք պարտքը առնի: Բայց զէ էնքան հնարքներ սարքող գիւղացին հեշտ կերպով խաբւող պտուղ էր: Շատ ապրեց սա իրա հաշիւից դուրս: Պինդ պահեց միշտ «Հայրմերը» ամեն Գաբրիէլին տեսնելիս ու երկար ժամանակ նրա քունն ու հանգիստը խանգարեց: Գաբրիէլի հնարքներն իզուր էին անցնում:

Մի օր էլ էս գիւղացին անցնում է մի գիւղի մօտով, տեսնում մի երեխայ



էնպէս սրտակաուր, հոգուր, հոգուր  
 լաց է լինում, որ սիրտն ուզում է թէ  
 բերանովը դուրս գայ: Սիրտը ցաւում  
 է էս երեխու վրայ ու մօտենում է  
 հարցնում, թէ ինչու է լաց լինում:—  
 Դասս չէի իմանում, սկսում է երեխան,  
 վարժապետը ծեծեց դուրս արաւ դպրո-  
 ցից, թէ մինչև չսովորես, չգաս. տանից  
 էլ հայրս ծեծեց դուրս արաւ, որ չեմ  
 ոտվորել: Հիմա վախում եմ՝ կամ դըպ-  
 րոց գնամ, կամ տուն, ասեց ու սկսեց  
 նորից լաց լինել: Դիւղացին կարեկ-  
 ցաբար մօտեցաւ, կռան տակն առաւ  
 երեխին, արտասուքը սրբեց ու նստեց  
 կողքի քարի վրայ:

—Ո՞րն է դասդ:

—Հայր-մերը...

—Լաց մի լինի, բալա ջան, ես  
 քեզ կը սովորացնեմ, ասում է գիւղացին  
 ու սկսում է սերտել տալ երեխային դա-  
 սը: Զարմանում է թէ ի՞նչպէս շուտ



սովորում է երեխան. մի երկու րոպէ  
չանցած հասնում են վերջին, և հէնց  
որ գիւղացին վերջացնում է... «և փառք  
յաւիտեանս ամէն.» քաւոր Գաբրիէլը  
ծիծաղելով վեր է կենում երեխի տե-  
ղից:

— Հը, սանահէր, հիմա հօ վերջաց-  
րի՛ր աղօթքդ...

Սանահօր լեզուն կապ ընկաւ, ու  
էն կապ ընկնելն է...

Գաբրիէլ հրեշտակապետը առաւ իր  
հասանելիքը ու վերացաւ երկինք:





БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

0007879

36323

ՁԻՄ  
6107

3737

**ՓՈՔՐԻԿ ԳՐԱԴԱՐԱՆ**

№ 1. ԻՄԱՍՏՈՒՆ ԵԶԸ՝ Գ. ՄԵՆԿԱՆԻ—2 Կ.



Գիրք

Тифлисъ, Книжный магазинъ „ГИРЬ“

891.995  
5-64

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0007879

